



# Մ ՈՒՐԲ Զ ԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



**ՉԱՏԻԿ**

12 ԱՊՐԻԼ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Զատիկույ Պատգամ	Էջ 2
Հրաշխ	Էջ 4
Ծաղկագարդի Զեռնարկ	Էջ 5
Յառաջդիմութիւն եւ Երջանկութիւն	Էջ 6
Ծանուցում	Էջ 8

### ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ ԳԻՐՔԷՆ (1.15-26)

Համբարձումէն քանի մը օրեր ետք, երբ շուրջ հարիւր քսան հաւատացեալներ մէկտեղուած էին, Պետրոս ոտքի ելլելով ըսաւ.

«Եղբայրներ, պէտք էր կատարուէր Սուրբ Գիրքին մէջ գրուածը, այն ինչ որ նախօրօք Սուրբ Հոգին ըսած էր Դաւիթի բերնով՝ Յուդայի մասին, որ Յիսուսը ձերբակալողներուն առաջնորդողը եղաւ: Յուդա մեր խումբէն էր, մեզի պէս առաքելական ծառայութեան համար ընտրուած: Բայց իր անիրաւ մատնութենէն ետք, որուն վարձքով ազարակ մը գնեց, երեսնիվայր ինկաւ այնտեղ եւ փորը ճեղքուելով՝ փորոտիքը դուրս թափեցաւ: Բոլոր Երուսաղէմացիները այս մասին իմացան, եւ այդ պատճառով այդ ազարակը իրենց բարբառով “ակեղզամա”, այսինքն՝ “Արեան ազարակ” կը կոչեն: Արդ, Սաղմոսներու գիրքին մէջ գրուած է. “Թող անոր տունը աւերակ մնայ, եւ մարդ հոն չբնակի” իսկ ուրիշ տեղ մը կ’ըսէ. “Իր պաշտօնը ուրիշ մը թող առնէ”: Այստեղ կան մարդիկ որոնք միշտ մեր հետը եղած են Տէր Յիսուսի երկրաւոր առաքելութեան ամբողջ տեւողութեան, Յովհաննէսի ձեռքով անոր մկրտութենէն մինչեւ երկինք համբարձման օրը: Ասոնցմէ մէկը պէտք է տասնըմէկիս միանայ՝ Քրիստոսի յարութեան վկայ ըլլալու համար»:

Այն ատեն հաւատացեալները երկու հոգի ներկայացուցին. Բարսաբա կոչուած Յովսէփը, որ արդար մականուանուեցաւ,

եւ Մատթիան: Ապա հետեւեալ աղօթքը ըրին. «Դուն, Տէ՛ր, որ կը ճանչնաս բոլոր մարդոց սիրտերը, ցո՛յց տուր մեզի թէ այս երկուքէն ո՞ր մէկը կ’ընտրես առաքելական այս պաշտօնին համար, որմէ Յուդա ինկաւ՝ ինքն իր ճամբան երթալու համար»:

Ապա երկու անուններուն վրայ վիճակ ձգեցին: Վիճակը Մատթիային ելաւ, եւ անիկա տասնըմէկ առաքեալներուն կարգին դասուեցաւ:

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՆՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ (16.1-8)

Շաբաթ օրը երբ անցաւ, Մարիամ Մագթաղենացին, Մարիամ՝ Յակոբի մայրը եւ Սողոմէն գացին խունկեր գնեցին եւ պատրաստեցին, որպէսզի երթան եւ օծեն Յիսուսի մարմինը: Կիրակի առաւօտ կանուխ, արեւածագին, գերեզման եկան: «Ո՞վ պիտի գլորէ գերեզմանի մուտքին դրուած քարը», կը հարցնէին իրարու, որովհետեւ քարը շատ մեծ էր: Սակայն երբ նայեցան, տեսան որ քարը արդէն իսկ գլորուած էր: Գերեզմանէն ներս մտան եւ ճերմակ զգեստ հագած երիտասարդ մը տեսան, որ աջ կողմը նստած էր: Սարսափեցան: Երիտասարդը ըսաւ անոնց. «Մի՛ վախնաք, գիտեմ որ խաչուած Նազովրեցի Յիսուսը կը փնտռէք. բայց հոս չէ, յարութիւն առաւ: Տեսէ՛ք, գինք հոս դրած էին: Այժմ գացէք, ըսէք իր աշակերտներուն եւ Պետրոսի, որ ահա Յիսուս ձեզմէ առաջ կ’երթայ Գալիլիա. հոն պիտի տեսնէք զինք, ինչպէս որ ըսած էր ձեզի»:

... հոս չէ, յարութիւն առաւ:

Երբ ասիկա լսեցին, դուրս փախան գերեզմանէն, զարհուրած եւ ապշահար, ու ոչ մէկուն բան մը ըսին, որովհետեւ կը վախնային:



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
Ս. ԶԱՏԿՈՒԱՆ ՊԱՏԳԱՄԸ

**ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ՝  
ԵՐԱՇԽԻՔԸ ՄԱՐԴՈՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ**

Իր մարդեղութեամբ, խաչելութեամբ ու յարութեամբ՝ Աստուծոյ Որդին աշխարհին առջեւ բացաւ դէպի փրկութիւն առաջնորդող նշմարիտ նամբան: Այլ խօսքով, մարդու փրկութիւնը դարձաւ իրականութիւն Քրիստոսի մարդեղացումով. դարձաւ կարելիութիւն՝ Քրիստոսի յարութեամբ: Աստուածային ի՞նչ մեծ պատիւ ու պարտաւորութիւն տրուած մարդուն:

Քրիստոնեան՝ Աստուծոյ կողմէ մարդուն ընծայուած փրկութեան գերագոյն պարգեւին ուրախութիւնը ապրող անձն է: Քրիստոնեան՝

«**Զըլլայ որ փրկութեան նամբէն հեռանա՛մ**»:

Քրիստոսով հունաւորուած փրկութեան նամբէն հաւատարմօրէն փախելու կոչուած մարդն է: Ահա թէ ինչու փրկութեան նամբէն հեռանալու վտանգին մէջ գտնուող եբրայեցիներուն

գրած իր նամակին մէջ Պօղոս առաքեալ կը զգուշացնէ զանոնք ըսելով՝ «**Զըլլայ որ փրկութեան նամբէն հեռանա՛ք**» (Եբր. 2: 1):

Փրկութիւնը սիրտը կը կազմէ փրիստոնէական հաւատքին. առանցքը՝ փրիստոնէական մտածողութեան. նպատակը՝ փրիստոնէական կեանքին: Արդարեւ, փրիստոնէութիւնը մարդը դէպի փրկութիւն առաջնորդող նամբայ մըն է:

Դարեր շարունակ աշխարհ փնտոնեց այս նամբան զանազան միջոցներով: Բեթղեհէմի մէջ ծնած Աստուծոյ Որդին ինքզինքն ներկայացուց որպէս փրկիչը աշխարհին ու նախապարհը դէպի փրկութիւն առաջնորդող: Քրիստոս իր երկրաւոր առաքելութիւնը իրագործեց ա՛յս յանձնառութեամբ:

Ի՞նչ է փրկութիւնը: Փրկութիւնը մերժումն է մարդակեղրոն կեանքի ու նախաջուրը Աստուծոյ, որպէս մեկնակէտը ու

նպատակակէտը մարդու գոյութեան: Փրկութիւնը մարդուն հեռացումն է երկրաւոր արժէքներէ ու արժեչափերէ եւ դարձը երկնային արժէքներու ու նշմարտութիւններու: Փրկութիւնը աստուածային դրախտէն վտարուած մարդուն վերադարձն է դէպի Աստուած՝ «աստուածային պատկեր»ին վերականգնումով:

**Փրկութիւնը աստուածային դրախտէն վտարուած մարդուն վերադարձն է դէպի Աստուած՝ «աստուածային պատկեր»ին վերականգնումով:**

Մեղաւոր մարդուն առջեւ փրկութեան նախապարհը բացաւ Աստուծոյ Որդին իր արեան հեղումով եւ իր յարութեան յաղթանակով: Փրկութեան նախապարհին մէջ ըլլալ կը նշանակէ՝

— Հաւատալ Քրիստոսի, ընդունելով զինք որպէս խարիսխը մեր կեանքին ու նպատակը մեր երկրաւոր գոյութեան: Հաւատքը տեսական յղացք կամ զգացական վիճակ չէ, այլ կեանքը ապրելու ու իրագործելու այնպիսի ո՞ն ու որակ՝ ուր կը նառագայթէ Աստուծոյ պայծառակերպիչ

«**նու հաւատքդ քեզ ապրեցուց**»:

ներկայութիւնը: Հաւատալ Քրիստոսի կը նշանակէ զինք ընդունիլ որպէս մեր կեանքին իմաստ ու խորք, ինքնութիւն ու ուղղութիւն տուող մնայուն

ներկայութիւն: Հաւատքը յաւիտեանական կեանքի աղբիւր է ու փրկութեան նախապարհ: Զմոռնանք Քրիստոսի խօսքը հիւանդին, մեղաւորին, զրկեալին ուղղուած՝ «**քու հաւատքդ քեզ ապրեցուց**»: Արդարեւ, Քրիստոս, որպէս յայտնութիւնը Աստուծոյ փրկութեան ծրագրին (Հո 16: 25), մեզ «**ընտրեց ու փրկութեան հրաւիրեց**» (Բ. Թս 3: 13): Եւ մենք Քրիստոսով ո՛չ միայն «**ճանչցանք**» այլ նաեւ «**գտանք**» Աստուծոյ փրկութիւնը (Ա. Կր 2: 30): Պիտի ըլլան մարդիկ, եղած են միշտ, որոնք մեր մտքերը պիտի պղտորեն, մեզ պիտի մոլորեցնեն, պիտի չարափոխեն նոյնիսկ Քրիստոսի Աւետարանը՝ մեզ առաջնորդելով դէպի «փրկութեան» այլ նամբաները: Քրիստոս զգուշացուց մեզ նման սուտ մարգարէներէ: Միշտ պէտք է յիշենք իրենց սրբակենցաղ կեանքով ու հոգեմտաւոր ստեղծագործութեամբ, իրենց հաւատքի վկայութեամբ ու գիտակից նահատակութեամբ,

Ե. դարուն, աշխարհին դիմաց մեր պապերուն կատարած քաջ յայտարարութիւնը.- *այս հաւատքէն մեզ ո՛չ մէկ ոյժ կրնայ հեռացնել. Աւետարանը կը ճանչնանք մեր հայրը եւ եկեղեցին՝ մեր մայրը:*

— Հետեւիլ Քրիստոսի որպէս մեր միակ Փրկիչը: Չմոռնանք երբեք որ Քրիստոսի միջոցաւ է որ ժառանգորդարձանք փրկութեան (Եփ 1: 11): Հետեւաբար, փրկութեան նամբուն մէջ պիտի ըլլանք եթէ Աւետարանին հետեւինք, ինչպէս Առաքելը կը վստահեցնէ մեզ: Սակայն Քրիստոս միշտ հաշիւ կը պահանջէ մեզմէ: Պատրաստ ենք

**Չկայ փրկութիւն առանց խաչի, առանց հաւատքի կրակով թրծուած ապաշխարութեան:**

համարատուութեամբ ու պատասխանատուութեամբ մեր կեանքը ապրելու՝ Քրիստոսի քարոզած ճշմարտութիւններու ու սկզբունքներու լոյսին տակ: Որպէս քրիստոնեաներ երկրի վրայ մեր ապրած կեանքին ու կատարած գործերուն

համար երկնքի մէջ հատուցում ստանալու գիտակցութեամբ ու երկիւղածութեամբ պարտաւոր ենք մեր կեանքը իմաստաւորելու: Քրիստոսի հետեւիլը դիւրին չէ. Քրիստոսի նամբան խաչի՝ նամբայ է: Չկայ փրկութիւն առանց խաչի, առանց հաւատքի կրակով թրծուած ապաշխարութեան: Ա՛յս խոր գիտակցութեամբ մեր ժողովուրդը հաւատարմօրէն հետեւեցաւ Քրիստոսի պատմութեան ամէնէն ահաւոր պայմաններուն մէջ. չհեռացաւ երբեք Քրիստոսի յարութեամբ բացուած վերանորոգ կեանքի նամբէն: Այսօր հաւատքի նո՛յն շերմութեամբ ու նո՛յն հաւատարմութեամբ կոչուած ենք հետեւելու խաչեալ ու յարուցեալ Քրիստոսի:

— Դառնալ նոր արարած՝ հաւատքի նամբով մասնակից դառնալով Աստուծոյ Որդւոյն մարդեղութեան ու յարութեան: Քրիստոսով հին Ադամը դարձաւ նոր Ադամ. մեղքի տիղմին մէջ խրած մարդը վերածնաւ, վերամարդացաւ: Քրիստոս մեզ հաշտեցուց իր երկնաւոր Հօր հետ՝ մեզ դարձնելով Աստուծոյ որդեգիր գաւակը. «Ոեւէ մէկը որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է. այլեւս չէ այն՝ ինչ որ էր նախապէս» (Բ. Կր 6: 17): Արդ, Քրիստոսի հաւատալ ու Անոր հետեւիլ կ'ենթադրէ մոռնալ մեր հին կեանքը, հեռանալ խաւարային մտածումներէն ու ապականեալ ու ապականիչ գործերէն եւ վերանորոգուիլ

Աստուծոյ պատկերին համաձայն, դառնալ դէպի փրկութիւն ընթացող նոր արարած: Մեր կեանքին մէջ յանախ շրջապատուած ենք այնպիսի կենցաղակերպերով ու գործելակերպերով, որոնք մեզ կը մղեն դէպի հին մարդը: Չմոռնանք երբեք որ Քրիստոսի արիւնով մենք գնուած ենք ու իր յարութեամբ դարձած փրկութեան նամբէն քալող նո՛ր մարդ: Արդ, միշտ պատրաստ պէտք է ըլլանք ընդունելու աստուածային փրկութեան շնորհքը վերանորոգելով մեր անձը, մեր կեանքն ու գործը:

— Ըլլալ Աստուծոյ գործակից, որովհետեւ Քրիստոս ինք մեզ Աստուծոյ գործակիցը դարձուց (Բ. Կր 6: 1): Ի՞նչ ծանր ու սրբազան առաքելութիւն տրուած մարդուն: Աստուծոյ ծրագիրը համայն մարդկութեան ու տիեզերքի փրկութիւնն է: Այս ծրագրի իրականացման համար Աստուած իր Միածին Որդին դրկեց աշխարհ: Փրկութեան ծրագրի իրագործման նամբուն առաջին հետեւորդներէն ենք մենք: Ճամբան երկար է ու անոր պարտաւորութիւնները՝ շատ դժուար: Այս նամբուն մէջ գտնուող Աստուծոյ գործակիցները՝ պիտի սիրեն զիրար ու նո՛յնիսկ իրենց թշնամին (Յո 14). պիտի պայքարին աշխարհի չար իշխանութիւններուն, չար մարդոց ու կառոյցներուն դէմ (Եփ 6: 12). բարի պատերազմը պիտի պատերազմին հաւատքի քաջութեամբ (Բ. Տմ 4: 6)՝ չարը բարիով յաղթելով (Հո 12: 21) ու միայն բարիք սերմանելով:

Ահա փրկութեան նամբան առաջնորդող պայմանները: Փրկութիւնը աւարտած դէպք մը չէ, այլ Քրիստոսի յարութեամբ բացուած երկար նամբայ մը՝ Քրիստոսի երկրորդ գալուստը երկարող:

Քրիստոսի յարութիւնը յիշեցում մըն է մեզմէ իւրաքանչիւրին ինքնաքննութեան ու ինքնահանաչման թէ՛ արդեօք փրկութեան նամբուն մէ՞ջն ենք. որքանո՞վ հաւատարմութեամբ կը քալենք այդ նամբէն:

**... արդեօք փրկութեան նամբուն մէ՞ջն ենք**

Քրիստոսի յարութիւնը նաեւ հրաւեր մըն է մեր բոլորին՝ մօտենալու փրկութեան նաեւ պարհին եթէ հեռու ենք անկէ. մեր կեանքին որակը փոխելու, եթէ ան չի համապատասխաներ փրկութեան նամբուն օրէնքներուն:

Թող ո՛չ ոք պարծենայ թէ՛ «փրկուած է»: Ամէնէն անմեղները նոյնիսկ միշտ պիտի մեղանչեն՝ գիտակցօրէն թէ անգիտակցաբար:

Էականը ապաշխարութեամբ վերադարձն է փրկութեան ճանապարհին՝ Անառակ որդիին նման:

Թող ո՛չ ոք ըսէ թէ՛ փրկութեան ճանապարհի աւարտին հասած է արդէն: Առաքեալը կ'ըսէ թէ փրկութիւնը պիտի տրուի մեզի՝ երբ Քրիստոս դա՛րձեալ յայտնուի ժամանակի վախճանին (Ա. Պտ 1: 5, 13):

Հետեւաբար, Քրիստոնեան պէտք է յուսահատի, այլ միշտ յուսայ՝ հաւատալով. պէտք է սոսկ սպասէ, այլ գործէ՝ հաւատալով ու յուսալով եւ մանաւանդ Աւետարանի արժէքները ու ճշմարտութիւնները ապրելով, «փրկութեան օրուան հասնելու» (Եփ 5: 30) յանձնառութեամբ:

\*  
\*\*

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնին առիթով, Հայրապետական օրհնութեամբ եւ Բրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունենք Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Նորին Վսեմութիւն Սերժ Սարգսեանը՝ մաղթելով իրեն քաջաողջութիւն եւ ազգաշէն ու հայրենանուէր իրագործումներով հարուստ գործունէութիւն:

Եղբայրական ջերմ սիրով կ'ողջունենք մեր եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռներու Գահակալները՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արք. Մանուկեանը, եւ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեանը, իրենց մաղթելով երկար գահակալութիւն՝ եկեղեցանուէր ու ազգօգուտ գործունէութեամբ պսակուած:

Հայրապետական օրհնութեամբ ու սիրով կ'ողջունենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Թեմակալ Առաջնորդները, հոգեւոր դասը, Ազգային Իշխանութիւնները, մեր ժողովուրդի կեանքին մէջ գործող բոլոր կազմակերպութիւններն ու միութիւնները եւ մեր եկեղեցւոյ հաւատացեալները: Կը հայցենք յարուցեալ Փրկչէն, որ դէպի փրկութեան ճանապարհը ուղղէ մեր ժողովուրդի բոլոր գաւակները:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ  
Սուրբ Զատիկ, 2009  
Անթիլիաս

## ՀՐԱՇՔ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Երկուշաբթի, 30 մարտ 2009-ին, Հալէպի պատմական Սրբոց Քառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հրաշք մը, երբ Ս. Մինասի, Ս. Քառասնից Մանկանց սրբապատկերներէն եւ Ս. Սարգիսի յատուկ հայկական խաչքարէն յստակ կերպով տեսանելի եւ շօշափելի ձէթ հոսեցաւ:

Արդարեւ, առաւօտեան ժամերգութեան աւարտին, երբ Ծաղկազարդեան եւ Յարութեան տօներուն նախապատրաստութեան աւանդական մաքրութիւնները կը կատարուէին, հաւատացեալ մը նշմարեց Ս. Մինասի սրբապատկերէն ձէթի ծորիլը: Առաջնորդ սրբազանը, քահանայ հայրերու եւ ազգայիններու ներկայութեան ակնատես վկան եղաւ աստուածային հրաշքին: Հրաշքէն անմիջապէս վերջ տեղի ունեցան յատուկ աղօթքներու արտասանութիւն, շարականներու երգեցողութիւն, մոմավառութիւն, օրհնեալ ձէթէն հաւատացեալներուն բամպակներով մատակարարում: Աւելի՛ն. խուռնեցամ բազմութիւն մը՝ թէ՛ հաւատացեալ, թէ՛ հետաքրքրուած անձերու, հայ թէ օտար, նոյնիսկ ո՛չ քրիստոնեայ այցելուներ, երկար շարքերով ամբողջ օրը մինչեւ գիշերուան ուշ ժամերը այցելեցին եկեղեցի՝ ստանալու օրհնութիւն եւ նորոգուելու հաւատքով:

Առաջնորդ սրբազան հայրը այս եղելութիւնը իր մանրամասնութիւններով անմիջապէս հաղորդեց ՆՍՕՏՏ Արամ Ա. վեհափառ հայրապետին: Այս հոգեպարար հրաշքին առիթով, վեհափառ հայրապետը հոգեկան ցնձութեամբ ու փառաբանական արտայայտութիւններով կ'օրհնէ մեր հաւատացեալ ժողովուրդը, կը հաստատէ Աստուծոյ հրաշագործ ներկայութիւնը մեր կեանքին մէջ, նմանօրինակ դէպքերը կը նկատէ հաւատքի նորոգութեան առիթ եւ մեր դարաւոր եկեղեցւոյ վկայութեան ու սրբութեան առաւել կառչելու երկնային քաղցր հրաւէր մը:

Փառք կու տանք Ամենակալին, որ Մեծ պահոց հոգեհնորոգ ժամանակամիջոցին կ'այցելէ մեզի եւ իր երկնառաք շնորհներով կը պատրաստէ մեզ Որդւոյն՝ Յիսուս Քրիստոսի հրաշափառ յարութեան:

ԴԻԻԱՆ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

## ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԶԵՌՆԱՐԿ

Երրորդ տարին ըլլալով, Շաբաթ 4 Ապրիլ 2009-ի երեկոյեան ժամը 4.00-էն 6.00, Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Գործադիր Մարմնի կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ հայ ընտանիքին յատուկ նախաձեռնող կազարդեան ձեռնարկը: Զեռնարկին մասնակցեցան 275 երեխաներ եւ մանուկներ: Ծնողները եւ կամաւոր



աշխատողները հաշուելով՝ մասնակիցներու թիւը կ'անցնէր 500-ը:

Հանդիսավարին՝ Տիկ. Զեփիւռ Խաչիկի բարի գալուստի խօսքէն ետք, երեխաները միասնաբար եւ Արժ. Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի առաջնորդութեամբ արտասանեցին «Հայր Մեր» հաւաքական աղօթքը:

Ապա, ընկերակցութեամբ կարն շարժապատկերի եւ սահիկներու ցուցադրութեան, Տիկ. Անահիտ Գոյումեան պատմեց Ղազարոսի յարութեան եւ Ծաղկազարդի պատմութիւնները:

Այս առթիւ, Յամիկ եւ Շողիկ Նանարեան բոլորքը պատրաստած էին



իւրաքանչիւր մանկական տարիքի յարմար



ձեռնարկին աշխատանքներ: Երեխաները զանոնք ամբողջացուցին եւ անոնցմով զարդարեցին յատուկ պատրաստուած ցանկատախտակները:



Շուտով հասաւ Զատիկ Նապիկը որ արժանացաւ փոքրիկներու խանդավառ դիմաւորութեան: Շրջելով սեղաններուն



միջեւ՝ ան մերթ պարեց եւ մերթ նկարուեցաւ փոքրիկներուն հետ: Ապա տեղի ունեցաւ համով հիւրասիրութիւն՝ պատրաստուած Ս. Յակոբ Գոյութեան Ժողովի, Տիկնաց Օժանդակ Յանձնախումբին եւ մասնակից ընտանիքներու կողմէ:

Եկաւ հաւկթամարտի պահը: Վերջին փուլին, իւրաքանչիւր սեղանի յաղթական



փոփրիկը մրցեցաւ միւս սեղաններու յաղթականներուն հետ: Ախոյեանին՝ Լիանա Թօփնեանի յանձնուեցաւ նուէր մը. նաեւ իր սեղանակիցներուն՝ փոփրիկ նուէրներ իրենց ֆաջալերանքին համար:

Տէր Գառնիկ՝ Եկեղեցւոյ Գործադիր Մարմնի



անունով շնորհակալական խօսք ուղղեց մօտ 50 անհատ կամաւորներուն եւ օժանդակ յանձնախումբերուն, որոնք սատարեցին այս յաջող ձեռնարկի կազմակերպումին ու գործադրութեան: Այս փոփրիկները զարդարուած ցանկատախտակները



շակած, Տէր Հօր եւ Զատիկ Նապիկի առաջնորդութեամբ ուղղուեցան դէպի

Եկեղեցի՝ գոչելով «Ովսաննա՛, Ովսաննա՛: Օրհնեալ է Ան որ Տիրոջ անունով կու գայ»:

Եկեղեցւոյ մէջ, յետ փոփրիկներու պատշանեցումը յատուկ արարողութեան, անոնց բաժնուեցան պզտիկ նուէրներ՝ պատրաստուած երէցկիւն Նինա Գոյունեանի կողմէ:

Վերջապէս, ժամադրուելով յաջորդ օրուայ թափօրին ներկայ գտնուելու, փոփրիկները ուրախ գուարթ վերադարձան իրենց տունները:

Վարձքը կատար բոլոր մասնակցողներուն:

ԴԻԻԱՆԱՏՈՒՆ

## ՅԱՌԱՋԳԻՄՈՒԹԻՒՆ ԵՆ ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆ

ԳԱՐԵԳԻՆ Ա. Կաթողիկոս Սարգսեան

Ստորեւ հատուած մը «Զրոյցներ ձիովանցի Կուսիքայի Հետ» հատորէն:

Այս հատորը ութերորդն է «Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց/Կրօնական, Աստուածաբանական եւ Հայագիտական Երկեր» շարքին: Հատորները կը ներկայացնեն երջանկալիշատակ կաթողիկոսի հոգե-իմացական կտակը: Շարքին մեկեւասն են Տ. եւ Տիկ. Հայկ եւ Էլզա Տիտիգեան: Ընդհանուր խմբագիրն է Տիար Վազգէն Ղուկասեան:

Հատորը ֆրանսերէնէ թարգմանած է նորոգ հանգուցեալ գրականագէտ Գրիգոր Շահինեան:

*Երբեմն հարց կու տամ ես ինձի. արդեօք արհեստագիտական մեր հիանալի զարգացումը այդքան մեծ յառաջդիմութիւն է: Դասական կոչուած մշակոյթի դարաշրջանին, Յունաստանի եւ Հռոմի մէջ, երբ փիլիսոփայութիւնը ծնաւ իբրեւ մտածումի գիտութիւն, այս ժողովուրդները, որ մեզի ձգած են արուեստի աննման գործեր, չունէին մեր արհեստագիտական զարգացումը: Արդեօք նուա՞զ երջանիկ էին, նուա՞զ մարդկային, քան մենք: Կը կարծեմ, որ յառաջդիմութիւնը պէտք է մարդկային կեանքի ընդհանուր ծիրին մէջ ներառուի: Անշուշտ մարդկային հանճարի մեծ նուճումներ կան. կ'օգտուինք անոնցմէ եւ պէտք է քաջալերենք գիտութիւնն ու արհեստագիտութիւնը: Բայց ամէն բանէ առաջ պէտք է արժեւորենք անոնց նպաստը ամբողջ մարդու զարգացումին եւ ոչ միայն՝ արագութեան, արդիւնաւորութեան:*

Այսօր անհաւասարակչութիւն մը կայ մէկ կողմէ արհեստագիտութեան, ճարտա-

րարուեստի եւ սպառումի կապուած ամէն ինչի եւ միւս կողմէ հոգեւոր արժէքներու, իմացականութեան եւ արուեստներու միջեւ: Այս անհաւասարակչուութիւնը պէտք է սրբագրուի:

Այսինքն դուք կը նկատէք, որ մեր օրերուն հոգեւոր եւ մարդկային զարգացումը համեմատական չէ արհեստագիտական զարգացումին: Կրնանք ըսել, թէ հոգեպէս թեր-զարգացածներ ենք:

Այո: Կը կարծեմ որ պէտք է խորացնենք մարդէ կալի ծանօթութիւնը: Ո՞վ ենք մենք: Լաւ գիտենք արտաքին աշխարհը, բայց պէտք չէ մոռնանք Սոկրատի դասը՝ Տելֆի տաճարի հանրածանօթ արձանագրութիւնը. «Ծանիր զքեզ»: Տոքթ. Ալեքսի Քարէլը, որ 1912-ին ստացաւ Նոպէլեան մրցանակը, գրած է Մարդը՝ Այդ Անծանօթը վերնագրուած գիրք մը: Կը կարծեմ, որ այս վերնագիրը ոչինչ կորսնցուցած է իր այժմէականութենէն: Ինչպէ՞ս կրնանք ապրիլ մեր կեանքը որպէսզի ուրիշներուն հետ կարենանք «կիսել երջանկութիւնը»: Կը կարծեմ, որ պէտք է ջանանք կերտել մարդկութիւն մը, որ տեսանելի դարձնէ Աստուծոյ դրոշմը:

Յառաջդիմութեան նպատակը օգնել է մարդուն՝ որ երջանկութիւնը նուանէ: Իսկ երջանկութիւնը, միւս կողմէ, բոլոր կրօններուն տալ ուզածն է մարդուն...

Յաճախ կ'ըսեմ, թէ յառաջդիմութիւնը մարդկային կեանքի ըմբռնումն է՝ Արարիչի ծրագրի ծիրին մէջ: Մենք աննպատակ կերպով չենք ստեղծուած. ստեղծուած ենք ուրախութեան մէջ լրիւ ծաղկելու համար: Բայց երջանիկ ըլլալ չի նշանակեր եսասէր ըլլալ: Հակառակը. երջանկութիւնը նուաճել կը նշանակէ դուրս գալ իր անձէն, երթալ դէպի ուրիշները: Այս տեսակէտէն, ոչ-մենաշնորհեալներու, կարիքաւորներու հանդէպ ունեցած մեր պատասխանատուութիւնը մաս կը կազմէ մարդկութեան հոգեւոր յառաջդիմութեան: Ոգեկանութեամբ չտոգորուած յառաջդիմութիւնը, ան, որ բաժնեկցութիւն չի դառնար իրենց մարդկային արժանապատուութեան մէջ անարգուած, ճնշուած, շահագործուած անձերուն հետ, իսկական յառաջդիմութիւն չէ:

Իրաւունք ունիք, երբ կ'ըսէք, թէ բոլոր կրօններու նպատակը մարդուն երջանկութիւնն է: Այսօր բացարձակապէս ստիպողական է եւ անհրաժեշտ, որ բոլոր կրօններու հաւատացեալները ունենդիր ըլլան ընդհանուր այս կոչին եւ յանձն առնեն միասին զայն իրագործել: Երջանկութիւնը չի կրնար բնաւ

նուաճուիլ բախումով, հակառակութեամբ, թշնամութեամբ կամ ատելութեամբ: Հակարակը. երջանկութեան գաղտնիքը փոխադարձ յարգանքի եւ սիրոյ մէջ է: Յաղթելու համար ցեղային, քաղաքական, տնտեսական եւ այլ հակադրութիւններու եւ բախումներու մահացու հիւանդութեան, պէտք է ամբողջ աշխարհի հաւատացեալները հաւաքաբար յանձնառու ըլլան խաղաղութեան:

Մեր ժամանակի ամենէն բացայայտ տարակարծութիւններէն մէկը ա՛յն է, որ հակառակ հաղորդակցութեան միջոցներու արտակարգ զարգացումին, որ հնարաւոր պէտք է դարձնէր ժողովուրդներու բաժնեկցութիւնը, նկատելի է միութեան պակաս մը ազգերու միջեւ, որուն հետեւանքն է այս տերբերութիւնը աղքատ եւ հարուստ երկիրներու միջեւ: Թերեւս հոգեւոր յառաջդիմութիւնը, որ նկատի ունիք, միութեան զարգացումի ուղղիմն պէտք է հետեւի:

Ճիշդ այդպէս: Միութեան եւ բաժնեկցութեան: Լաւ գիտէք Տիրոջ մեզի հաղորդած պատմութիւնը մարդուն, որ յարձակումի ենթարկուեցաւ աւազակներու կողմէ եւ ճամբուն վրայ ձգուեցաւ: Քահանան եւ ղեկավարն աճապարանքով անցան: Միակ անձը, որ մարդկային վերաբերում ցոյց տուաւ անոր, սամարացի մըն էր: Այս պատմութիւնը կենդանի օրինակ մըն է բաժնեկցութեան, ուրիշի հանդէպ գորովալի հետաքրքրութեան: Այս վերաբերումը երջանկութիւն կը պատճառէ մեզի եւ անոր բացակայութիւնը՝ դժբախտութիւն: Երջանկութիւնը բաժնեկցութիւն է միշտ: Եթէ բանտուինք մեր անձին, մեր ընտանիքին, մեր փոքր աշխարհին մէջ, երջանկութիւնը հարազատ չ'ըլլար:

Իմ անձնական հայեցակէտով, որպէսզի մարդկութեան միութիւնը օր մը իրականութիւն դառնայ, պէտք է ներկայի երազի եւ ցանկութեան վիճակէն մոլեգին ճիգի վերածուի: Եւրոպայի միութիւնը մեր դուռը կը բախէ: Մարդկութեան ամբողջականութեան տեսիլքը իբրեւ մէկ ստեղծագործութիւնը Աստուծոյ ընդհանրական տեսիլք մը կը դառնայ: Անոր հասնելու համար, պէտք է գործենք իսկական բաժնեկցութեան փրկիստիպայութեան մղուած: Հիւսիսը եւ Հարաւը, Արեւելքը եւ Արեւմուտքը, որոնք մեզի համար ամէն բանէ առաջ քաղաքական, տնտեսական եւ ընկերաբանական յղացքներ դարձած են, պէտք է վերագտնեն մեր միտքերուն մէջ իրենց սկզբնական աշխարհագրական նշանակութիւնը՝ իբրեւ զանազան կէտերը միեւնոյն մոլորակին:

## ԵՐԵՄՆՈՐԵԱԿ

Երոտեւթթթ, 13 Աորոյ 2009

### **ՅԻՇԱՏԱԿ ՄԵՆԵԼՈՅ**

Երեւթթթ, 14 Աորոյ 2009

19.00 Երիտասարդական զրոյց՝  
«Կենսոլորտի գիտութիւնն ու կրօնը»

Հրագւթթթ, 16 Աորոյ 2009

11.00 Աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Կրոնար, 19 Աորոյ 2009

### **ՆՈՐ ԿՐՈՆԱՐ**

09.30 Ժամերգութիւն  
11.00 Ս. Պատարագ

Հրագւթթթ, 23 Աորոյ 2009

11.00 Աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Չորեւթթթ, 24 Աորոյ 2009

19.00 Եղեռնեան Ոգեկոչում  
Ս. Պատարագ

Կրոնար, 26 Աորոյ 2009

### **ԿԱՆԱՉ ԿՐՈՆԱՐ**

09.30 Ժամերգութիւն  
11.00 Ս. Պատարագ

Երեւթթթ, 28 Աորոյ 2009

19.00 Ֆիլմի ցուցադրութիւն՝  
“The Chronicles of Narnia: Prince Caspian”

Հրագւթթթ, 30 Աորոյ 2009

11.00 Աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Կրոնար, 03 Մայրս 2009

### **ԿԱՐՈՐ ԿՐՈՆԱՐ**

09.30 Ժամերգութիւն  
11.00 Ս. Պատարագ

Հրագւթթթ, 07 Մայրս 2009

11.00 Աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Կրոնար, 10 Մայրս 2009

### **ՏՕՒ ԵՐԵՄԱՆ ՍՈՐԲ ԽԱՅԻՆ**

09.30 Ժամերգութիւն  
11.00 Ս. Պատարագ

## ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԶՐՈՅՅ

### «ԿԵՆՍՈՂՈՐՏԻ ԳԻՏՈՒԹԻՒՆ (ecology) ՈՒ ԿՐՈՆ»

Երեքշաբթի 14 Ապրիլ 2009, ժամը 19.00  
հոգաբարձութեան սենեակ

## ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ Առաջ. Մայր Եկեղեցի

Ուրբաթ, 24 Ապրիլ 2009-ի  
Երեկոյեան ժամը 7.00-ին՝

### Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՅ ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Եկէ՛ք, Խոռնեքամ Բազմութեամբ  
Լսենք Մարգարէն,  
Որ Բարձրաձայն Կ'աղաղակէ,  
Ըսելով.

«ՅԱՔԷ՛Ց ՈՍԿՈՐԱԵՐ, լսե՛ժէ՛ք  
ՏԻՐՈՋ ՊԱՏԳԱՐԸ:  
ԱՅՄՊԷՍ Կ'ՈՍԷ ՏԵՐՈ ՁԵՁԻ.  
- ԱՀԱԽԱՐԿ ԵՍ ՊԻՏԻ ՇԱՉԱԽՈՐԵԱ  
ԵՒ ԿԵՆԴԱՆԱՅՆԵԱ ՁԵՁ:  
ԶՐՈ ՈՒ ԱՐԴԻՆ ՊԻՏԻ ՏԱՄ  
ԵՒ ԱՈՐԹՈՎ ՊԻՏԻ ԾԱԾԿԵԱ ՁԵՁ.  
ԻՄ ՇՈՒՄՈՐ ՊԻՏԻ ՏԱՄ ՁԵՁԻ  
ԵՒ ՊԻՏԻ ԿԵՆԴԱՆԱՆԱՔ,  
ԵՒ ՊԻՏԻ ՃԱՆՉԱՆԱՔ,  
ԹԷ Ե՛Ս ԵՄ ՏԵՐՈ»: